ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

ՈՐՈՇՈՒՄ N 102

11 դեկտեմբերի 2020 թվական

ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՓՈԽԱՆՑԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 1260-Ա, 2018 թվականի մարտի 6-ի թիվ 303-Ն որոշումները և Հռիփսիմե Մելիքյանի դիմումը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է

1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքին սեփականության իրավունքով պատկանող Մարալիկ քաղաքում գտնվող Շիրազի փողոցի 22 շենքի թիվ 15 մեկ սենյականոց 28,4 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակարանը՝ երկրաշարժի հետևանքով քաղաք Մարալիկ 2-րդ թաղամաս 5-րդ քանդման ենթակա վթարային շենքի բնակիչների վերաբնակեցման՝ անվտանգության ապահովման, բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացված բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում, Հռիփսիմե Լյովայի Մելիքյանի երեք անձից բաղկացած ընտանիքին նվիրատվությամբ փոխանցելուն:

Ընտանիքի կազմը՝

Մելիքյան Հռիփսիմե Լյովայի

Գևորգյան Վահե Աշոտի

Սարոյան Մարիամ Լյովայի

2. Սահմանել, որ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հետ կապված բոլոր ծախսերը իրականացվելու են քաղաքացիների միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝ ...10	Դեմ՝ ... 0	Ձեռնպահ՝ ...0
Ն. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ			
Ա. ԱՐՄԵՆՅԱՆ			
Մ. ԳԵՎՈՐԳՅԱՆ			
Կ.ՀՈՎՍԵՓՅԱՆ			
Մ.ՂԱԶԱՐՅԱՆ			
Գ.ՂԶՐՈՅԱՆ			
Բ.ՄԵԼԻՔՅԱՆ			
Ա.ՆԱԶԱՐՅԱՆ			
Ա. ՆԻԿՈՅԱՆ			
Ա.ՈՒՌՈՒՄՅԱՆ			
Վ.ՍԱՀԱԿՅԱՆ			
Ա. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ			
Զ.ՍԱՐԳՍՅԱՆ			
Ա.ՎԱՐՈՍՅԱՆ			

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2020 թվականի դեկտեմբերի 11
Քաղաք Մարալիկ